# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 140-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշմամբ հաստատված թիվ 9 հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2026 թվականի մարտի 31-ի թիվ 77-Ա որոշումը՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1712-Լ որոշման թիվ 1 հավելվածով հաստատված պիլոտային կարգով հաշվարկած խրախուսման ֆոնդից դրամական պարգևատրմամբ խրախուսել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի վերոնշյալ որոշումների իմաստով ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատակիցներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Խրախուսման ֆոնդից դրամական պարգևատրմամբ խրախուսել վերոնշյալ որոշումների իմաստով ղեկավար պաշտոն չզբաղեցնող ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ASLANYAN VASIL 2210780089

**Վ. ԱՍԼԱՆՅԱՆ**

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ**

**2026 թվականի հունիսի 4**

**ք. Եղեգնաձոր**